

## **ՀՀ Ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 9/5**

**9 մարտի 2016 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Արա Ղուկասյանի 04.02.2016 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.01.2016 թ-ի թիվ 310385/04 որոշման դեմ:

#### **Ա/Ձ Արա Ղուկասյանի գանգատում բերված փաստարկները.**

ՀՀ ՖՆ ԻՎ պետի 27.01.2016թ. թիվ 310385/04 որոշման համաձայն իր նկատմամբ նշանակվել է տուգանք 20.000 դրամի չափով՝ 2015թ. երկրորդից չորրորդ եռամսյակների շրջանառության հարկի հաշվարկներ չներկայացնելու համար: Նշված որոշման հետ Ա/Ձ Արա Ղուկասյանը համաձայն չէ և խնդրում է այն չեղյալ համարել, քանի որ 2015թ-ի ընթացքում ընդհանրապես շրջանառության հարկով հարկվող գործունեությամբ չի զբաղվել, եղել է բացառապես արտոնագրային վճար վճարող և յուրաքանչյուր ամիս պարտադիր հարկային տեսչություն է ներկայացրել տեղեկություն հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ և ոչ մի անգամ ՀՏ-ից չի ծանուցվել այն մասին, որ պետք է ներկայացնեք շրջանառության հարկի հաշվարկներ, այլ ոչ թե հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկություններ:

Միաժամանակ, 2015թ. սկզբին ստացված ծանուցման համաձայն Ա/Ձ Արա Ղուկասյանը ներկայացել է հարկային տեսչություն, որտեղ պարզաբանել են, որ 2015թ-ի ընթացքում հնարավոր այլ գործունեություն սկսելու ժամանակ, որպեսզի շրջանառության հարկով հարկվելու իրավունքը չկորցնի, մինչև փետրվարի 20-ը պետք է ներկայացնի հայտարարություն շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ: Ա/Ձ Արա Ղուկասյանը ներկայացրել է այդ հայտարարությունը, սակայն հայտնում է, որ 2015թ-ին և ավելի վաղ ժամանակաշրջաններում շրջանառության հարկով հարկվող գործունեությամբ ընդհանրապես չի զբաղվել և ներկայումս նույնպես չի զբաղվում:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.09.2008թ. թիվ 9 պաշտոնական պարզաբանման 4-րդ կետը Ա/Ձ Արա Ղուկասյանը գտնում է, որ պարտավորություն չի կրում ներկայացնել շրջանառության հարկի գրոյական հաշվարկներ, ուստի խնդրում է չեղյալ համարել 27.01.2016թ. թիվ 310385/04 որոշումը:

#### **ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 18.01.2016թ-ի վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 55104

արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ Ա/Ձ Արա Ղուկասյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015թ-ի 2-4-րդ եռամսյակների շրջանառության հարկի հաշվարկները:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 27.01.2016թ-ին ընդունվել է թիվ 310385/04 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Արա Ղուկասյանի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին՝ գումարով 20.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ա/Ձ Արա Ղուկասյանը 2015թ-ի ընթացքում շրջանառության հարկով հարկվող գործունեություն չի իրականացրել, այլ բացառապես զբաղվել է արտոնագրային վճարով հարկվող գործունեությամբ:

Հանձնաժողովի համոզմամբ քննարկվող դեպքում անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2008 թ-ի սեպտեմբերի 30-ի թիվ 9 պաշտոնական պարզաբանման դրույթներով, որի 4-րդ կետի համաձայն՝ եթե հարկ վճարողը (կազմակերպության, անհատ ձեռնարկատեր, նոտար) փաստացի չի իրականացնում գործունեություն (այդ թվում նաև՝ չի հանդիսանում գործատու կամ հարկային գործակալ), ապա՝ այդ ժամանակահատվածում ներառվող՝ հարկատեսակների համար օրենքով սահմանված լրիվ հաշվետու ժամանակաշրջանների համար հարկ վճարողն իր հաշվառման վայրի հարկային տեսչություն հաշվետվություններ (այդ թվում՝ «զրոյական») չի ներկայացնում:

Վերոգրյալից հետևում է, որ Ա/Ձ Արա Ղուկասյանը 2015թ-ի ընթացքում շրջանառության հարկով հարկվող գործունեություն չիրականացնելու պայմաններում շրջանառության հարկի հաշվարկ ներկայացնելու պարտականություն չի կրել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 27.01.2016 թ-ի թիվ 310385/04 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ